ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ
ԲԱԶԻՆՅԱՆ

Երգչուհի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail: bazinyan77@mail.ru
Doi:10.58580/18290019-2022.1.62-43

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 2.10.2022 թ.,
ընդունվել է տպագրության՝ 11.10.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.9.2022 թ.

ԵՊԿ մեներգեցողության ամբիոնի նվիրյալները և իրենց գործունեությունը

Ամփոփում

Սույն հոդվածը նվիրված է կոնսերվատորիայի 100-ամյա հոբելյանին, մեներգեցողության ամբիոնի պատմական ընթացքի զարգացման գործունեությանը: Հեղինակն անդրադառնում է նրա առաջամարտիկներին, պրոֆեսորադասախոսական կազմին նրանց աշխատանքի արդյունավետ գործունեությանը, լուսաբանում է ամբիոնի վոկալ ավանդույթների զարգացման ուղին: Որպես առանձնահատուկ օրինակ, ներկայացնում է նրա երախտավորներից, հայ մշակույթի տաղանդավոր, մեներգեցողության արվեստի՝ ռահվիրա Հայկանուշ Դանիելյանի գործունեությունը:

Բանալի-բառեր. *Հայկանուշ Դանիելյան, երգչական արվեստ, մանկավարժություն, կատարողական արվեստ:*

Abstract

Singer, Associate Professor at Komitas State Conservatory ***Armenuhi Seryozha Bazinyan. - "Leaders of the Solo Singing Department of YSC and Their Activities ".***

The present article is dedicated to the 100th anniversary of YSC, the activity of the Solo Singing Department during its historical development. The author refers to its Heads, the teaching staff, the results of their fruitful work, and sheds light on the way of the development of the Department's vocal traditions. As a special example, he presents the activity of Haykanush Danielyan, a talented artist of Armenian culture, the pioneer of the art of solo singing.

Key Words: *Haykanush Danielyan, Vocal Art, pedagogy, performing arts.*

Абстракт

Певица, доцент ЕГК им. Комитаса ***Арменуи Сережаевна Базинян.- "Подвижники кафедры сольного пения ЕГК и их деятельность".***

Данная статья повящена 100-летию ЕГК, деятельности кафедры сольного пения в ходе исто- ричекого развития. Автор обращается к ее подвижникам, профессорско-преподавателскому составу, результатам их плодотворного труда, освещает путь развития вокальных традиций кафедры. В качестве особого примера приводится деятельность Айкануш Даниелян, талантливой армянской артистки.

Ключевые слова: *Айкануш Даниелян, певческое искусство, педагогика, исполнительское искусство.*

Ամբողջ մտատանջությունս է՝ հասցնել աշակերտներ, որոնք նուիրուին ազգային երաժշտութեան ուսումնասիրութեան, տարածեն ժողովրդի մեջ Հայ երաժշտութեան ոգին…
Ինչքան բաղձալի է այս նպատակով առանձին վարժարան, որուն միջոցով մեծ արդիւնք կարելի կրնայ ձեռք բերել:

ԿՈՄԻՏԱՍ

Նախաբան

Կան անուններ, առանց որոնց դժվար է պատկերացնել հայ վոկալ արվեստը, Հայաստանը... Նրանք պահպանեցին և շարունակեցին մեծություններից ժառանգած վոկալ արվեստի սկզբունքներն ու լավագույն ավանդույթները, իրենց ամբողջ փորձն ու գիտելիքները փոխանցեցին երիտասարդ սերնդին:

«Լսելով մեր երաժշտությունը, ունկնդիրներն անպայման պետք է որ ասեն. «Պատմեք մեզ այդ ժողովրդի

մասին, ցույց ավեք մեզ այդ երկիրը, որն ունի այդպիսի արվեստ: «Ահա կյանքիս երազանքը...»: *(1. էջ 268):*

ԵՊԿ-ի նվիրյալները տքնաջան կերպով իրենց գործունեությունը ծավալեցին թե ստեղծագործական, թե մանկավարժական բարդ ու դժվար աշխարհում:

ԵՊԿ մեներգեցողության ամբիոնի 100-ամյա ընթացքը

Այդ սերնդի շնորհիվ հայ վոկալ արվեստը մեծ նվաճումներ ունի և աշխարհին ներկայանում է շնորհալի և մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող երգիչ-երգչուհիներով: Նրանք լուսատու աստղի նման փայլելով մեր երաժշտարվեստի երկնակամարում, իրենց լուսավոր հետքն են թողել նաև հաջորդ սերունդների հոգևոր և գեղագիտական դաստիարակության գործում: ԵՊԿ-ի վոկալ ամբիոնի կարևորագույն խնդիրն է՝ ունենալ վոկալ-կատարողական արվեստի այնպիսի նշաձող, որով ուսանողները կարողանան ձեռք բերել պրոֆեսիոնալ երգչին համապատասխան գիտելիքներ, տեխնիկա, արտահայտչամիջոցներ, հարուստ երգացանկ և զարգացած գեղագիտական ճաշակ, սեր՝ հայ, ռուս և արևմտաեվրոպական երաժշտության հանդեպ:

Այս անդրադարձով փորձել ենք ընթերցողին ներկայացնել ԵՊԿ մեներգեցողության ամբիոնի երախտավորների, ներկայիս դասախոսական անձնակազմի, գործունեությունը 60-ականներից հետո:

Լրացավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հիմնադրման 100 տարին: Հայ վոկալ արվեստը ևս զարգացման ավելի քան հարյուրամյա ուղի է անցել: Սա պատկառելի տարիք է և մեծ տոն հայ երաժշտական մշակույթի համար: ԵՊԿ-ի առաջին ուսանողներից մեկը, հետագայում կոնսերվատորիայի պրոֆեսոր Թամար Շահնազարյանը հաճախ էր հիշատակում Ռոմանոս Մելիքյանի խոսքերն արվեստի մասին:

«Արվեստը Հազարան բլբուլ է, գտնվում է բարձր լեռան գագաթին: Կապույտ թռչունին ձգտում են հասնել նրանք, ովքեր ուզում են վարպետ դառնալ: Բարձունքի ճամփան դժվար է՝ ոտքերը սահում են, գլխին քարաբեկորներ են թափվում, մեկն ընկնում է, մյուսը ճամփան է կորցնում, երրորդն ինքն է ետ վերադառնում: Բայց նա է երջանիկը, երանի նրան, ով հաղթահարելով բոլոր դրժվարությունները, բարձրանում է լեռան կատարը և հասնում հեքիաթային Կապույտ Թռչունին ...»:

Տարիների հեռվից դժվար է պատկերացնել, թե ինչպիսի արգելքներ են հաղթահարվել, որպեսզի այսօր հնարավորություն ունենանք համարվելու ժամանակակից երաժշտական մշակույթի բարձր զարգացած կենտրոններից մեկը: Այդ դժվարին ժամանակներում վոկալ մասնագետները, որոնք իրենց կրթությունն ստացել էին Թիֆլիսի, Պետերբուրգի, Մոսկվայի, Բեռլինի, Փարիզի կոնսերվատորիաներում, կրում էին եվրոպական վոկալ դպրոցների ազդեցությունը: Եվ նրանք՝ այդ տաղանդաշատ մասնագետները, կարողացան զուգակցել և համակցել ձայնամշակման իրենց Եվրոպական վարպետությունը հայկական կատարողական պահանջներին՝ հաշվի առնելով հայերենի ֆոնետիկ առանձնահատկություններն ու նաև պահպանելով ազգային շունչն ու ոգին: Այս սկզբունքները Հայաստանի վոկալ-մշակույթի ձևավորման ու զարգացման համար բարերեր հիմք հանդիսացան:

Հայ մեներգեցողության արվեստը մեծ նվաճումներ ունի, աշխարհին մատուցելով գեղեցիկ ձայներով օժտված, մասնագիտական բարձր պատրաստվածությամբ երգիչ-երգչուհիներ, որոնք հաղթանակներ են տանում միջազգային մրցույթներում և փայլուն ելույթներ ունենում համաշխարհային մեծ ու փոքր բեմերում:

Այդ ձեռքբերումներն անմիջականորեն կապվում են ԵՊԿ մեներգեցողության ամբիոնի գործունեության հետ: Երգիչների մեծամասնությունը դաստիարակվել է վոկալ ամբիոնի նվիրյալների ջանքերի շնորհիվ՝ հիմք ունենալով հանճարեղ Կոմիտասի ավանդած վոկալ դպրոցի սկզբունքները, որոնք այսօր էլ ուղենիշ են վոկալ արվեստի շատ մասնագետների համար:

Ակադեմիական մեներգեցողության ամբիոնը 60-ականներին

60-ականներին ԵՊԿ-ի մեներգեցողության ամբիոնն իր շուրջն էր համախմբել երգիչ-երաժիշտների և մանկավարժների այնպիսի կարկառուն ներկայացուցիչներ, որոնց գործունեությունը մեծ թափով պիտի զարգացներ ու նաև նպաստեր Հայաստանի վոկալ մշակույթի բարգավաճմանը, պիտի ճանապարհներ բացվեին դեպի համաշխարհային մեծ բեմեր հայ երգիչ-երգչուհիների համար: Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի երգիչների բացարձակ մեծամասնությունը կրթվել ու դաստիարակվել է ԵՊԿ վոկալ ամբիոնի, ինչպես նաև դիրիժորներ Հակոբ Ոսկանյանի, Յուրի Դավթյանի, Արամ Քաթանյանի, հետագայում նաև Ռաֆայել Մանգասարյանի և այլոց գործունեության ու տքնաջան աշխատանքի շնորհիվ: Նրանք իրենց պրպտումների, օպերային հարուստ երգացանկի իմացությամբ և այն առավել հարստացնելու ձգտումով ևս նպաստեցին հայ վոկալ-կատարողական արվեստի վերելքին:

Տարբեր տարիների ամբիոնը ղեկավարել են վոկալ արվեստի ճանաչված ու հեղինակավոր ներկայացուցիչները:

1939-1943 թվականներին գլխավորում էր Նադեժդա Գրիգորիի Կարդյանը (նրա լավագույն կադրերից էին Լյուբով Օռլովան, Ավագ Պետրոսյանը, Ժ. Խաչատրյանը, Մ. Շմշկյանը, Սերգեյ Լեմեշևը և այլոք), 1943-1949 թթ. Հայկանուշ Դանիելյանը, 1949-1953 թթ.՝ կրկին Ն.Կարդյանը: Այնուհետև նրան փոխարինում է Թամար Կոնստանդինի Շահնազարյանը 1953-1964 թվականներին, 1964-1965 թթ. Ա. Քարամյանը, 1965-1970 թթ.՝ Թ. Կ. Շահնազարյանը, 1970-1973 թթ.՝ Պ. Լիսիցյանը, 1973-1977 թթ. Թ. Կ. Շահնազարյանը: 1977-1988-ին Տաթևիկ Տիգրանի Սազանդարյանը, 1988-2007 թթ.՝ Գոհար Միքայելի Գասպարյանը, 1998-ից բացվեց մեներգեցողության 2-րդ ամբիոնը՝ Ս. Վ. Կոլոսարյանի ղեկավարությամբ, իսկ 2007-ից մինչև 2018 թ. 1-ին ամբիոնը ղեկավարեց Սուսաննա Արամի Մարտիրոսյանը: 2018-ից ամբիոնների միավորվելուց հետո մինչ օրս այն ղեկավարում է Գայանե Պարույրի Գեղամյանը:

Academic Singing Department was replenished with names like Arshavir Karapetyan, Isabella Aydinyan, Gohar Gasparyan, Gohar Galachian, Magdalina Galustova, Svetlana Kolosaryan, Marianna Harutyunyan, Anna Sarajeva, Angela Harutyunyan, Nelly Pirumova, Ruzanna Baghdasaryan, and of course, the Department was headed by the outstanding Tatevik Sazandaryan, in 1983.

Аршавир Карапетян, Изабелла Айдинян, заведующая кафедрой Татевик Сазандарян, Гоар Гаспарян, Гоар Галачян, Магдалина Галустова, Рузанна Багдасарян, Нелли Пирумова, Анжела Арутюнян, Анна Сараджева, Марианна Арутюнян, Светлана Колосарян, 1983.

Ակադեմիական երգեցողության ամբիոնը համալրված էր այնպիսի անուններով, ինչպիսիք են Արշավիր Կարապետյանը, Իզաբելլա Այդինյանը, Գոհար Գասպարյանը, Գոհար Գալաչյանը, Մագդալինա Գալուստովան, Սվետլանա Կոլոսարյանը, Մարիաննա Հարությունյանը, Աննա Սարաջևան, Անժելա Հարությունյանը, Նելլի Փիրումովան, Ռուզաննա Բաղդասարյանը, և իհարկե, ամբիոնը գլխավորում էր մեծանուն Տաթևիկ Սազանդարյանը, 1983 թ.

Ամբիոնի վարիչ Թ. Կ. Շահնազարյանը լինելով Ռոմանոս Մելիքյանի և Արուս Բաբայանի սանը, նրանցից ժառանգել էր ազնիվ սեր և նվիրվածություն արվեստի նկատմամբ, կրում էր լավագույն ավանդույթներն ու սկզբունքները, և պատահական չէ, որ նրա դասարանն են ավարտել վոկալիստների մինչև օրս հայտնի և շնորհալի կադրեր՝ Արշավիր Կարապետյանը (նա հայ երգիչներից առաջինն էր, ով դարձավ միջազգային մրցույթի դափնեկիր), Վահան Միրաքյանը, Գոհար Գալաչյանը, Ելենա Վարդանյանը, Անժելա Հարությունյանը (Մուսորգսկու անվ. մրց. դափնեկիր), Վալերի Հարությունյանը, Սվետլանա Կոլոսարյանը, Սուսաննա Մարտիրոսյանը, Ռուբեն Մաթևոսյանը և այլոք... Եվ երևի թե Թ. Կ. Շահնազարյանն ամենաբեղմնավոր մանկավարժն է հայ մեներգեցողության ասպարեզում:

Միլանի «Լա Սկալա» օպերային թատրոնում փորձաշրջան անցան Սուսաննա Մարտիրոսյանը, Վահան Միրաքյանը, Հռոմի Սանտա Լուչիա ակադեմիայում՝ Արշավիր Կարապետյանը: Եվ պատահական չէ, որ իտալացի հեղինակավոր մասնագետները բարձր գնահատեցին վերոնշյալ երգիչների վոկալ դպրոցը: Նշանակալից է նրա դերը մանկական ձայնի պահպանման գործում: Նա հիմնադրեց մանկական ձայնի պահպանման մասնագիտացված դպրոց: Թ. Կ. Շահնազարյանը նպաստել և խթանել է վոկալ մեթոդիկայի մշակմանն ու ամրապնդմանը: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին ամբիոնը մասնակցեց համամիութենական մեթոդական կոնֆերանսներին, ուր Թ. Կ. Շահնազարյանը հանդես է գալիս Հայաստանում վոկալ-կրթական, գիտամեթոդական հայ ժողովրդական երգի հիմնանյութի վրա երգչին վոկալ դաստիարակություն տալու մասին ելույթներով և այլն... Այդ տարիներին ամբիոնի աշխատանքներին ջերմեռանդորեն իրենց մասնակցությունն էին բերում նաև Պավել Լիսիցյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Գոհար Գասպարյանը: Կատարողական արվեստին զուգընթաց նրանք նվիրվեցին նաև մանկավարժական գործին՝ կրթելով բարձրակարգ երգիչ-կատարողների: Նրանց փոխարինող սերնդի երգիչներից կարելի է նշել Օ. Գաբայանին՝ դաս. Ա. Քարամյան, Ք. Մալունցյանին՝ դասախոս Տ. Սազանդարյան, Ս. Կոլոսարյանին, Վ. Հարությունյանին, Կ. Սիմոնյանին՝ դասատու Թ. Շահնազարյան, Ս. Գույումջյանին՝ դասախոս Պ. Լիսիցյան: Կամերային երգարվեստում իրենց նվաճումներով աչքի ընկան Ի. Այդինյանը՝ դասասխոս Թ. Կ. Շահնազարյան, Լ. Զաքարյանը՝ դասախոս Ա. Քարամյանը, Ս. Դանիելյանը և այլոք: Նրանք գրեցին հոդվածներ, մեթոդական աշխատանքներ՝ մեներգեցողության արվեստի իրենց փորձի, պատկերացումների և ըմբռնումների մասին:

Ամբիոնի աշխատանքներին անմասն չէին նաև Ի. Այդինյանը (Կ. Կարապետյան, Մ. Հարությունյանը, Մ. Գալուստովան, Մ. Հովակիմյանը, Կ. Միրզոյանը, Ա. Թադևոսյանը, Ե. Մանուչարյանը) Ռ. Գուլաբյանը (Արաքս Դավթյան, Մարիետա Անտոնյան, Սարգիս Գույումջյան...), Ա.Կարապետյանը՝ (Բ. Թումանյան, Ա. Մարտիրոսյանը, Գ. Արսենյանը), այդ տարիներին ավագ դասատու Ա. Սարաջևան՝ (Ռ. Օջախյան, Լ. Մկրտչյան, Գ. Գեղամյան, Ա. Մայիլյան...):

ԵՊԿ ամբիոնի դասախոսների հիմնական մասը բարձր կոչումներով գործող երգիչ-կատարողներ էին, որոնք ակտիվ կերպով ներգրավված էին երկրի մշակութային կյանքին: ԵՊԿ ամբիոնի շրջանավարտների, ասպիրանտների և ուսանողներից աշխարհի տարբեր բեմերում իրենց հաջողություններով աչքի ընկան այնպիսի երգիչ-երգչուհիներ, ինչպիսիք էին Էլլադա Չախոյանը, Բարսեղ Թումանյանը, Արաքս Դավթյանը, Հասմիկ Պապյանը, Գեղամ Գրիգորյանը, Հասմիկ Հացագործյանը, Գայանե Գեղամյանը, Անահիտ Միսիթարյանը և այլն:

- *Ռոզալիա Գուլաբյան – (1908-1982 թթ.) - Արաքս Դավթյան, Մարիետա Անտոնյան, Սարգիս Գույումջյան, Քնարիկ Մալունցյան, Ալիսա Հեքիմբաշյան և այլոք:*
- *Արմիկ Քարամյան – (1910-1969 թթ.) - Լուսինե Զաքարյան, Գարուշ Ավետիսյան, Էսմա Խոսրովյան, Օլգա Գաբայան և այլոք:*
- *Տաթևիկ Սազանդարյան – (1916-1999 թթ.) - Հասմիկ Պապյան, Սուսաննա Մարտիրոսյան և այլոք:*
- *Աննա Սարաջևա – (1920- 20 թթ.) - Ռեբեկա Օջախյան, Գայանե Գեղամյան, և այլոք:*
- *Գոհար Գասպարյան – (1924-2007 թթ.) - Անահիտ Միհիթարյան, Քրիստինե Սահակյան և այլոք:*
- *Մագդալենա Գալուստովա – (1925-2003 թթ.)- Սարգիս Թորոսյան, Միքայել Հովակիմյան, Կարեն Միրզոյան, Եղիշե Մանուչարյան, Աշխեն Թադևոսյան:*
- *Իզաբելա Այդինյան – (1928-1996 թթ.) - Կարինե Կարապետյան, և այլոք:*
- *Արշավիր Կարապետյան – (1929-1987 թթ.) - Բարսեղ Թումանյան, Արկադի Մարտիրոսյան, Գոռ Արսենյան և այլոք:*

Այսպիսով, այդ տարիներին ԵՊԿ ակադեմիական երգեցողության ամբիոնի ռահվիրաները կուռ բռունցք դարձած, ջանք ու եռանդ չխնայեցին, որպեսզի հայ վոկալ-արվեստը հասցնեն այնպիսի բարձունքների, որ հայ կատարողներն իրենց պրոֆեսիոնալ հմտություններով կարողանան համընթաց քայլեն համաշխարհային վոկալ արվեստի ներկայացուցիչների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Юзефович В., Арам Хачатурян., М., 1990 г.
Uzephovich V., Aram Khachtryan., M., 1990.

REFERENCES

1. Yuzefovich V., Aram Khachaturyan., M., 1990.

Հեղինակի մասին. *(ծ. 21.6.1972 թ. ք. Երևան): Ավարտել է՝ 1999-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան՝ որպես օպերային, համերգային երգչուհի, 1999-2001 թթ. սովորել է ասպիրանտուրայում մեներգեցողություն մասնագիտացմամբ: 1999-2001 թթ. աշխատել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնում՝ որպես իլյուստրատոր: Դասավանդել է 2002-2003 թթ. Քանաքեռավանի արվեստի դպրոցում, երգեցողության ուսուցչուհի, 2003-ին ԵՊԿ մեներգեցողության 2-րդ ամբիոնում, ասիստենտ, 2005-ից՝ դասախոս, դոցենտ (2016 թ.), 2017-ից համատեղության կարգով նաև Երևանի Պ. Չայկովսկու անվ. միջնակարգ մասնագիտական դպրոցում:*

Об авторе: *АРМЕНУИ СЕРЕЖАЕВНА БАЗИНЯН (род. 21 июня 1972 года, Ереван). Окончила: Ереванскую государственную консерваторию им. Комитаса (1999) и аспирантуру (2001) по специальности “Сольное пение”. Работала: иллюстратором на кафедре концертмейстерской подготовки ЕГК им. Комитаса (1999 — 2001); учителем по вокалу в художественной школе Канакераван (2002-2003); ассистентом на кафедре #2 сольного пения ЕГК им. Комитаса (с 2003); преподавателем на той же кафедре (с 2005); доцент ЕГК (с 2016). в Ереванской специальной музыкальной школе им. П. И. Чайковского (по совместительству, с 2017).*

About the author: *ARMENUHI SERYOZHA BAZINYAN (born 1972, Yerevan). In 1993 she graduated from the Piano Department of Yerevan Romanos Melikyan Music College. In 1999 she graduated from the Department of Opera and Stage Singing at Yerevan Komitas State Conservatory. In 1999-2001 she took postgraduate courses in solo singing. In 1999-2001 she worked as an illustrator at the Concertmasters´ Department at YSC. In 2002-2003 she was a vocal teacher at Kanakeravan School of Arts. In 2003-2005 she worked as an Assistant Professor at the Department of Solo Singing at YSC, since 2005 - as a pedagogue at the same department, since 2016 - Associate Professor of YSC. Since 2017 she has worked as a part-time teacher at Yerevan Tchaikovsky Specialized Music School.*